

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՎՍՏԱՀԻՆՔ ՈՐՊԻՍՉԻ ՉՎԱԽՆԱՆՔ

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կը սպասէ, որ մի՛շտ բացարձակ վստահութիւն ունենանք իր նկատմամբ: Հաւատացեալները երկու խումբի կը բաժնուին: Ոմանք մի՛շտ Աստուծոյ կը վստահին, իսկ ուրիշներ փորձութիւններու հանդիպելէ ետք կը սկսին Աստուծոյ վստահիլ եւ յուսալ: Պէտք է Աստուծոյ վստահի՞նք որպէսզի չվախնանք, թէ պէտք է վախնանք որպէսզի Աստուծոյ վստահինք: Երբ աշակերտները փոթորիկի հանդիպեցան ծովուն վրայ, Յիսուս անոնց մօտ չտեսաւ իր ակնկալած վստահութիւնը իր նկատմամբ: Անոնք հրաշքը տեսնելէ ետք միայն վստահեցան իրեն: Ան յանդիմանեց զիրենք իրենց վստահութեան պակասին համար: Փորձութիւններ պէտք չէ պատճառ ըլլան, որ խախտի մեր վստահութիւնը Աստուծոյ հանդէպ:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՈԹԵՆՔ

Ողորմէ՛, Տէ՛ր, մեր եղբայրներուն, ծնողներուն ու իմ արիւնակից մերձաւորներուս, կրօնաւորներուն ու միանձն ճգնաւորներուն, անոնց, որոնք մեզի ողորմութիւն պարգեւեցին եւ անոնք, որ յանձնարարեցին զիրենք յիշել մեր աղօթքներուն մէջ. ողորմէ՛, Բարերա՛ր, եւ տո՛ւր իւրաքանչիւրին կարիքին համաձայն: Առատապէս բաշխէ՛ Սուրբ Հոգիիդ շնորհքները բոլոր անոնց եւ զարդարէ՛ ու միացո՛ւր Քու Աստուածութեանդ սիրոյն մէջ: Ե.Ա.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՅ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ
ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Կազմակերպութեամբ Կրօնական Ժողովին եւ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին, ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդաձուլութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ, Նարեկ Սրբազան պիտի հանդիպի 18-40 տարեկան հայ երիտասարդ-երիտասարդուհիներու հետ՝ ծանօթացման ընկերային հաւաքով ու Աստուածաշունչի սերտողութեամբ քննարկելու համար հայ քրիստոնէական կեանքը: Միաժամանակ, նոյն ժամուն եւ նոյն վայրին մէջ, Արժ. Տ. Ղետնդ քինյ. Լոշխաճեան Աստուածաշունչի սերտողութիւն պիտի կատարէ մեր ժողովուրդի զաւակներուն համար:

Միքելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 – facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՈՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019

ԹԻՒ 39

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Առ. 3. 18-26: Ես. 65. 22-25: Գղ. 6.14-18:
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24.30-36

ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
24.30-36**

Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծածայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թ՛գեմին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն գիտէք, թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին գիտցէք, թէ մարդու Որդիին զալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Մակայն ո՛չ որ գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշ-

Ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը

Մեզմէ կը պահանջուի սիրելի հաւատացեալ ընթերցող արթուն եւ պատրաստ ըլլալ ինչպէս Յիսուս կ'ըսէ: Արթուն եւ պատրաստ ըլլալ հոգիով, աղօթքի նամբով: Ամէնօրեայ աղօթքը կարեւոր անհրաժեշտութիւն է, հոգեւոր սնունդ է ինչպէս մեր մարմինը նիւթական սնունդի կարիքը ունի, նոյնպէս մեր հոգին հոգեւոր սնունդի՝ հացի կարիքը ունի: Ամէնօրեայ աղօթքն է այդ հոգեւոր հացը, որուն միջոցաւ մեր հաւատքը կը զօրանայ եւ այն ատեն մենք արթուն եւ պատրաստ պիտի ըլլանք դիմաւորելու Տէրը:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔԷՆ
3.18-26

Իմաստութիւնը կեանքով կը վարձատրէ իրեն ապաւինողները եւ ապահովութիւն կու տայ անոնց, որոնք իրեն կը կռնին, որպէս Տիրոջ:

Իր իմաստութեամբ էր, որ Աստուած երկրին հիմերը դրաւ, գիտութեամբ հաստատեց երկինքները: Իր հանճարով է, որ երկրի ընդերքներէն ջուրերը կը ժայթքեն եւ ամպերը անձրեւ կը թափեն: Որդեակ, իմաստութենէն մի՛ բաժնուիր բնաւ. խրատներու եւ խորհուրդներու հետեւէ՛, որպէսզի կեանք ունենաս, շնորհքներով զարդարուիս, մարմինդ առողջ մնայ եւ ոսկորներդ հանգրտանան, որպէսզի խաղաղ ըլլայ քու կեանքդ եւ ապահով ընթանաս, առանց երբեք գայթելու. ցերեկը անվախ նստիս եւ գիշերը քաղցր նինջով քնանաս:

Ուստի մի՛ վախնար գալիք փորձանքներէն, ո՛չ ալ ամբարիշտներու յարձակումներէն, որովհետեւ ամենուրեք Տէրը հետդ պիտի ըլլայ եւ պիտի պաշտպանէ քեզ որոգայթներէն:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ
6.14-18

Գալով ինձի, քաւ լիցի, որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինձի համար, ինչպէս եւ մեռած եմ այդ աշխարհին համար:

Կարեւորը մարդու թլփատում կամ անթլփատ ըլլալը չէ, այլ՝ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր անոնց հետ, որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց, որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ռեւէ մէկը աշխարհիկ հոգեբով թող զիս չնեղէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վերքերուն սպիները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

Ո՛վ ՏէՐ, մեր ՏէՐԸ,
ի՛նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:
Փառքդ աւելի բարձր է՝ քան երկինքը, բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով գովեստդ հիւսեցիր քեզի հակառակորդներուն դիմաց, որպէսզի լուսութեան մատնես թշնամիներդ եւ հակառակորդներդ: Երբ կը դիտեմ երկինքդ, մատներուդ գործը, կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր, կը մտածեմ. Ի՞նչ է մարդը, որ կը յիշես զայն, մարդ արարածը ի՞նչ է, որ հոգածութիւն ցոյց կուտաս անոր:
Ձայն քիչ մը վար դասեցիր քեզմէ, փառքով ու պատուով զայն պսակեցիր. քու բոլոր ստեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն, անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ, հօտերն ու արջառները, նաեւ բոլոր վայրի անասունները, երկնքի թռչուններն ու ծովուն ձուկերը, եւ ծովերուն մէջ լողացող բոլոր էակները: Ո՛վ ՏէՐ, մեր Տէրը, ինչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ (Մաղմուս 8):

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱԶ

Ըստ եկեղեցւոյ աւանդութեան սուրբ Հոնիփսիմեանց կոյսերը Դիոկղետիանոս (243-31) կայսեր կողմէ կը հալածուին, կու գան Հայաստան եւ կ'ապաստանին Վարագայ լեռան լանջին: Սուրբ Հոնիփսիմէ իր վիզին կը կրէր Քրիստոսի խաչափայտէն մասունք մը, որ ստացած էր ժառանգաբար Կլավտիոս կայսեր տիկնոջ՝ Պատրոնիկէ թագուհիին կողմէ:

Հայաստանի մէջ Հոնիփսիմեանց կոյսերը հալածանքի կ'ենթարկուին եւ այդ պատճառով ալ Սուրբ Հոնիփսիմէն իր խաչը կը պահէ Վարագայ լեռան մէկ ֆարայրին մէջ: Հայաստանի մէջ միշտ գիտէին, թէ այդ խաչը պահուած է Վարագայ լեռան վրայ, բայց չէին գիտեր թէ ուր:

653 թուին այդ լեռան վրայ իրենց նգնութիւնը կ'ընեն Թողիկ նգնաւորը եւ իր աշակերտ՝ Հովելը, օրն ի բուն աղօթելով եւ խնդրելով Աստուծմէ, որ ձեւով մը Աստուած իրենց յայտնէ Խաչին վայրը: Հայր Աստուած, միշտ կ'ուզէ գինի հաւատացողներուն խնդրանքները իրականացնել: Օր մը լոյսի տեսիլով 12 սիւներու մէջտեղէն վեր կ'անջատուի Սուրբ Նշանը՝ խաչը եւ կու գայ դէպի սուրբ խորանը, ուր կ'աղօթէին երկու նգնաւորները: Նոյն ատեն կը լսուի ձայն մը, որ կ'ըսէ «Քրիստոս հանեցաւ բնակիլ Սուրբ Խաչին մէջ, ի պահպանութիւն եւ փրկութիւն հայոց աշխարհին»:

Լուսեղէն սիւները 12 օրեր շարունակ կ'երեւին Վարագայ լեռան Գալիլիա կոչուող գագաթին վրայ, այնպէս մը որ ամէն մարդ կրնար տեսնել գանունի:

Հոգեւորականներ եւ իշխաններ, հայոց Ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսի եւ Ռշտունեաց Վարդ Ռշտունի սպարապետի գլխաւորութեամբ կու գան Վարագ սուրբ Խաչին երկրպագելու:

Ներսէս հայրապետը սուրբ Խաչի երեւումը տօն կը հռչակէ, 12 լուսեղէն սիւներու երեւցած տեղը եկեղեցի կը շինէ, եւ ուր որ իջած էր սուրբ Խաչը կը մեծցնէ եւ աւելի փառաւոր կը կառուցէ: Այս առիթով կը գրուի նաեւ «Նշանաւ ամենայաղթ խաչիւղ քով Քրիստոս» շարականը եւ մինչեւ Վարագայ սուրբ խաչի տօնը կը սահմանուի 5 օրեայ շաբաթապահիք, որ ժողովրդական լեզուով կը կոչուի «Վանեցիներին»:

Վարագայ լեռան գագաթին եւ ստորոտին կը հիմնուին վերին եւ ներքին եկեղեցիները, որոնցմէ աւելի ծանօթ է Ներքին Վարագավանքը, ուր նաեւ կը պահուէր խաչափայտի մասունքը մինչեւ 1021: Երբ Սենեֆերիմ Արծրունի Վասպուրականի թագաւորութիւնը կը յանձնէ Բիզանդիոնի, կը տեղափոխուի Սեբաստիա եւ իր հետ կը տանի նաեւ սուրբ Նշանը սակայն քիչ ետք 1026-ին սուրբ Նշանը կը վերադարձուի Ներքին Վարագավանք: 11-րդ դարուն, Աշոտ Գ. Բագրատունի սուրբ Նշանին համար շինել կու տայ ոսկեայ տուփ մը եւ 1237-ին կը տեղափոխուի նոր Վարագավանք: Ասկէ ետք 1651-ին կը տարուի Խոջաբ, 1655-ին կը դրուի Վանի սուրբ Տիրամայր եկեղեցւոյ մէջ, որուն պատճառաւ ալ եկեղեցին կը վերանուանուի Սուրբ Նշան անունով: Մաղափա Օրմանեան պատրիարքը (1841-1918) իր «Ծիսական բառարան»-ին մէջ կը վկայէ, որ իր օրով սուրբ խաչը տակաւին կը մնար Վանի Սուրբ Նշան եկեղեցւոյ մէջ, սակայն մեծ եղեռնէն ետք անոր գտնուած վայրը անյայտ է:

Սուրբ Խաչին կը վերագրուին բազմաթիւ հրաշքներ, մանաւանդ Եղեսիոյ համաճարակի ժամանակ, երբ Վարագայ Սուրբ Խաչի գօրութեամբ կանգ առած է համաճարակը:

Ագաթանգեղոսի վկայութեամբ, հայոց երկնակամարին վրայ լուսեղէն սուրբ խաչը երեւցած է նաեւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչի, ինչպէս նաեւ սուրբ Մեսրոպ Մաշտոցի յուղարկաւորութեան ժամանակ Վաղարշապատէն մինչեւ Օշական, ըստ Մովսէս Խորենացիի վկայութեան: